վն հասատատուեր քո գրեաց 'ի Ներ գահն հռովմայ։ Արդ՝ հրաման եղեւ 'ի բարձրագոյն կառավարութիւն ոմն գերապայծառ միտրապոլիտն մեր 1820 հոկտ" 26 Nr. 710 գրեր մոյլովայ կառավարութիւն։ Եւ մոյլովայ կառավարութի 'ի սոյն 'ի նոյն ամի դեկտ" 15 Nr. 165 գրեր առ իս թէ ես խնդրեցից 'ի գահէն հռովմայ զհաստատուելն։

Եւ հնազանդելով բարձրագոյն կայսերական կառավարութեան համարձակեցայ ես փոչի գոլով ոտից ձերում գերապայծառ տերութեցդ։

Յանձնեմ զիս 'ի ձեռս ես եւ 'ի բարի կամս ձեր զոր ինչ հոգին Ներ տնօրինեսցէ եւ յօգուտ խղճալի ազգին մերոյ եւ 'ի փրկութի հոգւոյ իմոյ նոյն տէր առաջնորդեսցէ

Մնամ գերապայծառազոյն եւ գերավսեմագոյն տերութեդ Ներ աթոռոյն յետին պաշտօնեայ եւ մշտնջենական հպատակ Ներ ժողովրդ

Անտոն Արքեպկն պուրադեան։

1821, յունվարի. 16։
'ի քաղաքն ղարասու։

Ճիշտ այս միջոցին Վենետիկի Մխիթարեան Հայրերն սկսած են Խրիմի կողմերը հաստատուիլ։ Սկզբնաւորութիւնը՝ ժամանակակից նամակներէ քաղած տեղեկութեանց համեմատ, այսպէս եղած է։

Հ. Մինաս Վ. Բժշկեան 1819ի Տրապիզոնի եւ Կ. Պոլսոյ կրօնական խառնակութեանց երեսէն կը փախչի Վենետիկ, եւ ասկէ 1820 Ապր. 13ին մեկնելով Վիեննայի վրայէն Լեմբերգ քաղաքը կ'երթայ եւ Արքեպ.ին հիւրը կ'ըլլայ երեք շաբաթ։ Անկէ կալիցիոյ հայաբնակ վայրերը կը շրջի մինչեւ Սուչաւա եւ կը դառնայ Զեռնովից, ուր 15 տուն հայ կաթողիկէ ժո-